11580

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«16» 08 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0119-22

Ձեռնարկողը՝ ***«Մլ Մայնինգ» ՍՊԸ***
ՀՀ ք. Երևան, Շիրակի փողոց, 74/16 հասցե

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոց 21/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ ք. Երևան, Ադոնցի փողոց, 21/2 հասցե

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0119-22
<16> 08 2022թ.

«Մլ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոց 21/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մլ Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Ադոնցի փողոց, 21/2 հասցե

Ներածական մաս. «Մլ Մայնինգ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, Ադոնցի փողոց 21/2 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 01062022-01-0124, /ծածկագիրը՝ 01-003-0211-0024/, Երևանի քաղաքապետարանի կողմից 07.12.2021թ. տրված N 01/18-07/2-154932-1066 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/, Երևանի քաղաքապետարանի կողմից 06.05.2022թ. տրված N 01/18-Դ-10688-22 քանդման թույլտվությունը: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողամասի ընդհանուր մակերեսի չափը՝ 0.54836 հա:

Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը մշակվել է «ՔՅՈՒՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ նախագծային ընկերության կողմից:

Նկարագրական մաս. Նախատեսվող «Բազմաբնակարան բնակելի համալիրի» նախագիծը բաղկացած է «Ա» և «Բ» վերգետնյա մասնաշենքներից:

«Ա» մասնաշենքը բաղկացած է 15 վերգետնյա հարկերից, իսկ «Բ» մասնաշենքը՝ 17 հարկերից: Մասնաշենքերի հատակի հարդարման 0.000 նիշը համապատասխանում է 1199.5 մետր բացարձակ նիշին:

Մասնաշենքերի առաջի հարկերը նախագծվում են որպես կոմերցիոն տարածքներ՝ 1035.36 ք.մ մակերեսով, իսկ վերգետնյա 2-15/17 հարկերը նախագծվում են բնակելի հարկեր, մասնավորապես «Ա» մասնաշենքում նախատեսվում է 83, իսկ «Բ» մասնաշենքում՝ 95 բնակարան:

Նախագծվող համալիրը բաղկացած կլինի 3 ստորգետնյա հարկերից, որոնք նախագծվում են -3.600, -7.050, -10.500 նիշերով նկուղային հարկերում, և որտեղ կնախատեսվի 128 տեղանոց ավտոկայանատեղի:

Շենքերի բոլոր բացվածքները դեպի պատշգամբ նախատեսվում են իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Շենքերում նախատեսվում է փոքր վերելակ՝ հակահրդեհային պահանջներին համապատասխան, աստիճանավանդակների դռները կունենան ինքնափակման համակարգ: Մասնաշենքերի մուտքերը նախագծվում են թեքահարթակների կազմակերպմամբ:

-10.500 նիշում նախատեսվում է երկակի նշանակության ավտոկայանտեղի, որը կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց 750-800 մարդու համար: Այս հարկում նախատեսվում է 1 սանհանգույց, ինչպես նաև օդափոխության և լուսավորության համակարգեր:

Նախագծվող բնակելի համալիրի հողամասի հարևանությամբ գտնվող շենք-շինությունների հեռավորությունը կազմում է 10 մ և ավել, ինչպես նաև նախագծվող հողամասում բացակայում են ինժեներական ցանցերը և այլ ենթակառուցվածքները, որոնք ենթակա են տեղափոխման:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի հեռավորությունները մոտակա շենք-շինություններից պատկերված են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում /այսուհետ՝ Հայտ/ ներկայացված իրադրության հատակագիծ սխեմայում:

Առկա են հակահրդեհային հիդրանտներ /տեղադրվում են 150 մ շառավղով/՝ համալիրի հարակից «Պրեմիում Ադոնց» և «Ճառագայթ» բնակելի թաղամասերում:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա են եղել 512.9 ք.մ մակերեսով ինքնակամ շինություններ, որոնք ապամոնտաժվել են համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից 06.05.2022թ. տրված N 01/18-Դ-10688-22 քանդման թույլտվության:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

Հողամասի մակերեսը՝ 5483.6 ք.մ,

Կառուցապատման մակերեսը (վերգետնյա)՝ 1375.3 ք.մ,

Կառուցապատման մակերեսը (ստորգետնյա ավտոկայանատեղի)՝ 2193.4 ք.մ,

Մայթեր, սալվածքներ և ճանապարհ (անջրանցիկ տարածք)՝ 1842.3 ք.մ,

Կանաչապատման մակերեսը՝ 2266.0 ք.մ,

Բնակարանների ընդհանուր քանակը՝ 178,

Ստորգետնյա ավտոկայանատեղիների քանակը՝ 128 ավտոմեքենա:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է միաձույլ երկաթբետոնե (ե/բ) շրջանակային հիմնակմախքի իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Շենքերի տանիքը նախատեսվում է հարթ և կազմակերպված արտաքին ջրահեռացման լուծումներով:

Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք 200 մմ հաստությամբ ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոխնայողության և Էներգոարդյունավետության տեխնիկական լուծումները նախագծվել են համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների, մասնավորապես, բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն 80 մմ հաստության հանքաբամբակե ջերմամեկուսիչով և կերեսպատվեն 30 մմ հաստության բազալտե, տրավերտինե և տուֆի սալերով՝ խարսխային եղանակով կամ ց/ա սվաղով ներկված ճակատային բարձրորակ ներկով:

Բնակելի շենքերի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում են առանձնացված հորաններ՝ ինժեներական ցանցերի (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրասնուցում) իրականացման համար:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնութագրող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը, որոնք հյուսիսից հարավ հարում են Հրազդան գետի զառիթափ լանջերին: Նախագծվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված:

Նախատեսվող գործունեության հողակտորը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում և նախկինում եղել է կառուցապատված, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ: Տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով նույնպես բացակայում են:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ: Բնութագրվող տարածքը չի գտնվում հատուկ պահպանվող գոտում, տարածքում և տարածքի մերձակայքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Տարածքում հնագիտական շերտերի առկայությունը բացառվում է, հաշվի առվելով այն, որ տարածքը նախկինում եղել է կառուցապատված, ինչպես նաև տեղամասում իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունները, համաձայն որի տեղամասի երկրաբանական կառուցվածքի ձևավորմանը մասնակցում են արհեստական լիցքեր (շերտ 1-2) և բեկորային ավազներ (3-շերտ):

Նախատեսվող գործունեության տարածքում, համաձայն երկրաբանական ուսումնասիրությունների՝ բացակայում է հողաբուսական շերտը:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են ցածր հորիզոններում, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Բնութագրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Ըստ նախկինում արված ուսումնասիրությունների՝ տարածքում գրունտային ջրերը գտնվում են 80 մ-ից խորը հորիզոններում:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ տեղամասում շինարարական աշխատանքների իրականացման համար:

Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերում ներառված «ՀՀ համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների» հաստատված ցանկի արժեքների, Երևան քաղաքի տարածքը բնութագրվում է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի բարձր մակարդակով՝ αmax=0.4g (9 բալ ըստ MSK-64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացման արժեքով:

Բնակելի շենքերի շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը բերված է Հայտում: Կառուցապատման աշխատանքների տևողությունը՝ ըստ մշակված շինաշխատանքային կազմակերպման նախագծի (ՇԿՆ)՝ հաշվարկվում է 39 ամիս, որտեղ հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է շուրջ 3 ամիս:

Բազմաբնակարան բնակելի համալիրի նախաշինարարական աշխատանքների փուլում, համաձայն շինաշխատանքների կազմակերպման նախագծի, կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Շինհրապարակի կազմակերպման նախագիծը (ՇԿՆ) բերված է Հայտում: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի

բացառապես նախագծվող հողատարածքի սահմանների ներսում, որտեղ ըստ պլանի կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- հողատարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում և տարածքի համահարթեցման գործողություններ,
- լուսատուների տեղադրում և հրապարակի լուսավորության (≥ 20 լք) ապահովում,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքեր՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշխղեկի աշխատասենյակ և այլն),
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը,
- կստեղծվեն շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիներ և այլ միջոցառումներ:

Տեղամասի հողային աշխատանքները կիրականացվեն հիմնականում մեքենայացված եղանակով (Hyundai 170W կամ KOMATSU PC 400-7 տիպի էքսկավատոր), իսկ դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Շինարարական աշխատանքների ընթացքում հողային աշխատանքների իրականացման ժամանակ ընդհանուր հանույթի ծավալը գնահատվում է 37746մ^3, որից 4206մ^3-ը նախատեսվում է որպես ետլիցք, մնացած 33540 մ^3-ը նախատեսվում է որպես տեղափոխվող և թափոնակույտվող գրունտ: Հողային աշխատանքների ընթացքում առաջացած ավելորդ հանույթը կտեղափոխվի և կթափոնակույտվի քաղաքային աղբավայրում:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից և շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը առաջարկվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Առանձին ամրանային ձողերը, հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կկատարվի դրանց պահեստավորումը և տեղադրումը:
- Բետոնային խառնուրդը՝ միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար կառաքվի անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով Երևան քաղաքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագայում շինհրապարակ առաքման նպատակով:

Շինարարական հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները, հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան: Պահման վայրերը հաշվի են առնված հրապարակի կազակերպման պլանում, ինչը ներկայացված է Հայտում:

Կառուցապատման աշխատանքներում աշխատողների միջին թիվը՝ ըստ ՇԿՆ-ի, հաշվարկվել է 32 մարդ, որից ինժեներական կազմը՝ 4 մարդ, ծառայողական աշխատողներ (մեքենավար և օգնական)՝ 7 մարդ, արհեստագործներ և բանվորներ՝ 21 մարդ:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական մեքենաները, մեխանիզմները և սարքավորումները.

Էքսկավատոր՝ 2 միավոր, բուլդոզեր՝ 1 միավոր, շարժական կոմպրեսոր՝ 1 միավոր, վերամբարձ ավտոկռունկ՝ 2 միավոր, աշտարակային կռունկ՝ 1 միավոր, տոփանիչ՝ 4 միավոր, գոյքային կաղապարամած՝ 6 կոմպլ., թրթռիչ մակերեսային էլեկտրական՝ 6 հատ, թրթռիչ խորքային էլեկտրական՝ 6 հատ, փոխարկիչ թրթռիչների համար՝ 6 հատ, եռակցման տրանսֆորմատոր՝ 6 հատ, դակիչ ձեռքի էլեկտրական՝ 6 հատ, ձեռքի էլեկտրական դուր՝ 6 հատ, հղկող մեքենա՝ 6 հատ, թրթռագլդոն՝ 1 հատ, ավտոբետոնախառնիչ՝ քանակը հաշվարկով, ավտոբետոնատար՝ քանակը հաշվարկով, ինքնաթափ ավտոմոբիլ՝ քանակը հաշվարկով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում, համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի:

Բազմաբնակարան բնակելի համալիրի տարածքում կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է հաշվի առնելով ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման՝ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Կանաչապատման աշխատանքների շրջանակում տարածքում կստեղծվեն 2266.0 ք.մ (41.3%) մակերեսով կանաչ գոտի:

Համաձայն «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի՝ նախատեսվում են արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսականության տնկում, մասնավորապես.

Ծառատեսակներ

- եղևնիներ՝ 27 հատ
- հուդայածառ՝ 11 հատ
- թխկի սրատերև-կարմրատերև՝ 8 հատ
- սոսի՝ 7 հատ
- կելրեյթերիա հուրանավոր՝ 7 հատ
- գիհի կազակական՝ 4 հատ
- ալբիցիա լենքորանյան՝ 6 հատ

Պատնեշային և ծաղկող թփեր

- կենսածառ՝ 685.9 մ
- ասպիրակ վանհուտտի՝ 31 հատ
- ծորենի/կծոխոր՝ 28 հատ
- ֆորզիցիա՝ 30 հատ
- ծաղկային տարածք՝ 20 ք.մ

Կանաչապատ 2266.0 ք.մ մակերեսում կիրականացվի նաև սիզամարգեր, մասնավորապես, 1 ք.մ-ում կցանվի 0.04 կգ խոտի սերմ, ընդամենը՝ 90.64 կգ խոտի սերմ:

Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի ավտոմատ ոռոգման համակարգի միջոցով: Ներքին ավտոմատ ցանցի միջոցով, որը նախագծվում է Φ=20-50մմ տրամագծով պոլիէթիլենային խողովակներից, Φ=15 մմ ցողացիրներից, Φ=20մմ ոռոգման փականներից և Φ=20-40մմ արկղով փականներից: Քանի որ նախագծվող տարածքին կից չկա քաղաքային ոռոգման ջրատար, ոռոգման համար նախագծվում է հոր, որտեղ կկուտակվի ջուրը և հետագայում կօգտագործվի ոռոգման նպատակով: Ոռոգման համակարգի սխեմատիկ պատկերը ևս ներառված է տարածքի «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծում»:

Տնկարկն իրականացնելու համար կմշակվեն համապատասխան խորությամբ և տրամագծի /ծառերի համար՝ 100 սմ խորություն և 50 սմ լայնություն, թփերի համար՝ 50-60 սմ խորություն և 40 սմ լայնություն/ փոսորակները: Կանաչապատման աշխատանքներում հողախառնուրդը՝

սևահող, կարմիր ավազ, տորֆահող, փտած գոմաղբ 3:1:1:0.5 հարաբերությամբ կմատակարարվի լիցենզավորված մատակարարներից՝ ՀՀ-ում գործող օրենսդրության համապատասխան: Մատակարարվող հողախառնուրդի ծավալը գնահատվում է 907 խ.մ:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի շենքերի սպասարկման աշխատանքների շրջանակում, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներում, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման համար, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Ջրցանի՝ հողի/գրունտի խոնավացման համար ջրի ծախսը համաձայն հաշվարկի կկազմի՝ 2548.3մ³/շին. ժամ., իսկ շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար՝ 601.5 մ³/շին. ժամ. կամ 0.701 մ³/օր:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կմատակարարվի նախագծվող հողամասին կից անցնող քաղաքային ջրագծից՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 04.02.2022թ. տրված N ՎՋ308/2022 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող շինարարական նորմերի և կանոնների:

Համաձայն տեխնիկական պայմանի ջրամիացումն իրականացվելու է Ադոնցի փողոց 21/2 տարածքի դիմացով անցնող d=400մմ թուջե ջրագծից /ջրի ճնշումը 0.8 մթն, ջրամատակարարումը շուրջօրյա է/: Ջրաչափական հանգույցի և հակահրդեհային հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահոր:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ բազմաբնակարան բնակելի համալիրի կոյուղագիծը միացվելու է Մամիկոնյանց փողոցով անցնող d=700 մմ կոյուղատարին: Կոյուղագծի միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի տարածքից մակերևութային ջրերի հեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է միացնել Կոմիտասի պողոտայով անցնող d=400 մմ հեղեղատարին: Հեղեղատարի միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Բազմաբնակարան բնակելի համալիրի կենտրոնացված տաք ջրամատակարարման գործընթաց չի նախատեսվում, վերջինս կկազմակերպվի բնակիչների կողմից՝ լոկալ լուծումների իրականացմամբ:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 29.01.2022թ. տրված «Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ – էլեկտրական ցանցին միացման պատվերի»՝ բազմաբնակարան բնակելի համալիրի էլեկտրամատակարարումն նախատեսված է իրականացնել կառուցվող ՏԵ-ի 0.4կՎ վահանի տարբեր հատոններից՝ մալուխային գծերով: Էլեկտրասնուցման միացման տեսակը՝ եռաֆազ, պահանջվող հզորությունը՝ 1,200 կՎԱ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի գազամատակարարման տեխնիկական պայմանը ձեռք կբերվի՝ ըստ ՀՀ-ում գործող ընթացակարգերի:

Բնակելի շենքերի օդափոխությունը կիրականացվի խոհանոցներից՝ բնական օդափոխությամբ: Նախատեսվում է նաև արտածում տեղակայվող հովանոցներից, որոնց համար կտեղադրվեն օդատարներ: Սանհանգույցներից նախատեսվում է մեխանիկական արտածում՝ կանալային օդափոխիչների միջոցով:

Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են ներածման և արտածման համակարգեր: Նախատեսվում է մեխանիկական դրդմամբ օդափոխության համակարգեր: Ներածման սարքերը տեղակայված են -3.60 նիշում գտնվող օդափոխության խցերում և սպասարկում են ավտոկայանատեղիները: Արտածման համակարգերը ապահովում

ՓՈՐՁԱՊԵՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
COMMISSION OF EXPERTS

են արտածում 2 գոտիներից՝ վերևի և ներքևի, ներքևի գոտու ճաղաշարը տեղադրվելու է հատակի նիշից 20 սմ բարձրության վրա: Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են նաև 2 ծխահեռացման համակարգեր: Աղմուկի նվազեցման համար նախատեսվում է մեկուսացում՝ ֆոլգայապատ չայրվող քարե բամբակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում 33540 խ.մ մնացորդային գրունտը և 120 խ.մ շինաղբը /ասֆալտ-բետոն/ ժամանակավոր կկուտակվի շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով /ամենաուշն երեք օրը մեկ/ տեղափոխվելու և թափոնակույտվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր /աղբահանության թույլտվությունը ձեռք կբերվի նախաշինարարական աշխատանքների փուլում/:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող վտանգավոր թափոնների որակական և քանակական բնութագրերը՝

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը	Քանակը
«Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV	≤ 5 կգ/օր
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54100303 02 03 3	III	≤ 25 լ/շին
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100301 02 03 3	III	
«Հողային, ավազային շլամ, խրամատների հանվածքներ»	31602500 04 00 4	IV	33540 խ.մ
«Ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ»	31401200 01 00 4	IV	120 խ.մ

Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով /ամենաուշն երկու օրը մեկ/ համայնքի կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբաման:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց /ավազե, մետաղական կամ բետոնե/ հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը: Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է Հայտի՝ «Թափոնների և նյութերի կառավարման պլան» ենթաբաժնում:

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի «Բազմաբնակարան բնակելի համալիրի» կառուցապատման աշխատանքների /նախագծում, շինարարություն/ և շահագործման ընթացքում բնապահպանական միջոցառումների ծրագրի /ԲՄԾ/ ակտիվ և արդյունավետ իրականացմամբ: ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա: ԲՄԾ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30 կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ,
- փոշի առաջացնող սորուն նյութերը /ավազ, խիճ և այլն/ շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- կիրականացվեն անվադողերը մաքրելու /ավազակոպճային մակերևույթների իրականցում/ և լվացման միջոցառումներ,
- կառուցվող շենքերը արտաքինից և ներքինից կծածկվեն համապատասխան բարձրության անթափանց պաստառներով,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը,
- աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայությամբ և կանոնավոր կերպով կհսկվի վերջիններիս տեխնիկական վիճակը, իսկ անսարքությունների հայտնաբերման դեպքում կիրակնացվեն համապատասխան միջոցառումներ,
- սոցիալական ազդեցությունների մեղմացման տեսանկյունից՝ շին-աշխատանքները և աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն ժամը 09:00-ից 18:00,
- շինարարական գործողությունների ընթացքում հնարավոր թրթռումների մակարդակներից ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով վերջիններիս հեռավորությունը նախագծվող տարածքից (≥ 10 մ): Բացի այդ շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ-ում թրթռումների գործող նորմերին, քանի որ կառուցապատման ընթացքում հարակից կառույցներին հասցրված ցանկացած ֆիզիկական վնաս կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարական աղբի և ավելորդ ոչ պիտանի գրունտի կանոնավոր հեռացում և թափոնակույտում քաղաքային աղբավայրում,
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար փակ աղբամաններ, իսկ կենցաղային աղբը կհեռացվի հասարակական աղբաման,
- շինհրապարակից դուրս գալիս կապահովվի մեքենաների անիվների լվացման միջոցառումներ,
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականցվի լիցենզավորված մատակարարից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, մետաղական կամ ավազե հիմքերի վրա,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում, այդ թվում հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,
- կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, անհատական պաշտպանիչ դիմակներով և այլն,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի հիմնականում շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,

- նախագծվող տեղամասում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հաստատված նախագծի:

Նախատեսվող գործունեության ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը /առանց հարկերի/ հաշվարկվում է 56026.5 հազ. ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում է շինարարության փուլում շին. աղբի հեռացման և կանաչապատման աշխատանքները, որոնց ծախսերը հաշվի են առնված նախագծի ծավալաթերթերում:

Կառուցապատողի կողմից կանոնավոր մշտադիտարկում /մոնիթորինգ/ է իրականացվելու, որպեսզի վերահսկվի ԲՄԾ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են Կառուցապատողին նկատված անհամապատասխանությունների մասին:

Նախատեսվող գործունեության ընթացքում հիմնականում գնահատվում են անօրգանական փոշու արտանետումներ շինաշխատանքների, մասնավորապես՝ հողային աշխատանքների իրականացման փուլում: Հաշվի առնելով գործունեության ընթացքում հողային աշխատանքների ծավալը և ինտենսիվությունը, ինչպես նաև նախատեսվող մեղմացնող միջոցառումները, տեղամասում գետնամերձ շերտում փոշու մասնիկների կոնցենտրացիաների դիտարկումներն առաջարկվում է իրականացնել հարևան ազդակակիրների կողմից համապատասխան բողոքների դեպքում:

Փոշու մասնիկների փորձանմուշները կվերցրվեն գործունեության իրականացման տեղամասում և առաջարկվում է իրականացնել շաբաթական մեկ նմուշառում: Այսպիսով, հաշվի առնելով հողային աշխատանքների տևողությունը՝ նմուշառումների գումարային քանակը գնահատվում է՝ 120000 ՀՀ դրամ: Չափագրումների իրականացման համար Ընկերությունը կհամագործակցի նշված աշխատանքներն իրականացնող մասնագիտացված լաբորատորիայի հետ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /օդի, հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում, բուսականության աճի, խնամքի, շինհրապարակի որակի, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված և այլն/, ինչը ներառված է Հայտի «Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիթորինգի պլան» ենթաբաժնում:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններ, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված

բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի՝ ապահովելով նախատեսված 2266.0 քմ (41.3%) մակերեսով կանաչ գոտի և որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
8. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մլ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոց 21/2 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վրեժ Վարդանյան